

Ոջիլներ

Ընդհանուր տեղեկություններ. Միֆունկուլյատոզ, այլ կերպ ասած՝ ոջլոտություն հիվանդությունը հարուցում են *Siphunculata* կարգին պատկանող միջատները: Հիվանդությունը արտահայտվում է ուժեղ քորի, մաշկի բորբոքման, անհանգստության և մթերատվության անկման նշաններով: Ընտանի կաթնասունների և մարդկանց մոտ մակաբուծվում են 19 տեսակի ոջիլներ: Յուրաքանչյուր կենդանի ունի իր տեսակին բնորոշ ոջիլ, մի կենդանին այլ տեսակի կենդանու ոջիլով չի վարակվում:

Ոջիլները հիմնական պարազիտներ են, այսինքն ապրում և ձվադրում են կենդանիների վրա, սնվում են կենդանու արյունով Տիրոջ օրգանիզմից դուրս ոջիլները արագ ոչնչանում են: Կենդանու վրա ոջիլի կյանքի տևողությունը 1-2 ամիս է:

Հիվանդության տարածման աղբյուր են հանդիսանում հիվանդ կենդանիները: Վարակումը տեղի է ունենում անմիջական շփման միջոցով նաև խնամքի առարկաների միջոցով: Ոջիլներով վարակման ինտենսիվությունը մեծանում է ձմռան ամիսներին՝ մսուրային պահվածքի ընթացքում:

Կլինիկական նշանները. Ոջիլով վարակված կենդանիները մշտապես քորում են իրենց, ատամներով կրծոտում մաշկը կամ էլ քսում կողմնակի առարկաների, որի հետևանքով մաշկը բորբոքվում, թեփակալվում և մազաթափվում է: Ոջլոտության հետևանքով կենդանիները հյուծվում և նիհարում են, ընկնում է նրանց մթերատվությունը:

Տզերի և ոջիլների հասցրած վնասները. Տզերի և ոջիլների կողմից գյուղատնտեսական կենդանիներին հասցրած վնասը շատ մեծ է: Ազդում են մի քանի ուղղություններով, նախ՝ կպչելով կենդանիներին, սնվում են նրանց արյունով՝ արյան մեջ թողնելով իրենց կենսագործունեության արգասիքները, որը կենդանիների մոտ առաջ է բերում թունավորումներ: Տզերը սնվելով կենդանիների արյամբ, ազդում են մթերատվության վրա: Կենդանիները հյուծվում են, դանդաղում է մատղաշների աճը, հաճախակի են հիվանդանում ոչ վարակիչ և այլ վարակիչ հիվանդություններով:

Բացի այդ տզերը և ոջիլները հանդիսանում են մի շարք ինֆեկցիոն հիվանդությունների փոխանցողներ. տզերը՝ տավարի թեյլերիոզ, պիրոպլազմոզ, անապլազմոզ, բարեզիոզ, իսկ ոջիլները տարածում են նաև առավել վտանգավոր՝ ինֆեկցիոն էնցեֆալոմիելիտ, հիվանդությունը: Ոջիլները հանդիսանում են այդ հիվանդության ռեզերվուար (պահեստարան):

Տզերը ժապավենաձև որդերի (մոնեզիոզներ և այլն) միջանկյալ տերերն են: Կան նաև այլ ընտանիքի տզեր, որոնք նույնպես հասցնում են մեծ տնտեսական վնաս: